

22940

331.1  
P-38

1930



331.1  
P-38

05 JAN 2010

Գրայիտառներ բոլոր յերկրների միացել

05 FEB 2000

# ԹԵՂԻՍՆԵՐ

Հձմել յեզ յերկար. Կենտկոմի վիճել կնիված  
յեզ 1930 թ. հունվարի 1-ից ույժի մեջ մտած  
նոր ընդհանրական պայմանագիրը սպարզաբա-  
նելու համար

---

ՀՐԱՄԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԱՆԴՐՁԱՆԱՐԴԿՈՄԻՏԵՅԻ

Թիֆլիս—1930 թ.

ՏԵՂ. ԱՅ. 2013

22940

331.1

Բ-36

ԱՄԲ

## ՀՆԳԱՄՅԱԿԻ ՊԱՅՔԱՐՈՒՄ

Առաջին տարվա հաջողությունները

55

Պոլիգրաֆ. 2-րդ տպ.,  
Լենինի փողոց № 3.  
Պատվեր 506 տիրամ  
350. Դլավլիս 208

Ի զարգացումն ԱՄՀԿԻ (ՎՀԸՊԸ) դիրեկտիվի  
յերկաթուղային արանսպորտում հավաքայմանզրի  
կամպանիան անցկացնելու մասին, յերկաթուղական-  
ների միության կենտրոնական կոմիտեն յուր գիմու-  
ռմի մեջ ցույց տվեց, վոր «ընդհանրական հավաքական  
պայմանագիրը հետագայում պետք է հանդիսանա մի  
պարտավորություն, կազմակերպող և մասսաները մո-  
բիլիզացիայի յենթարկող՝ յերկաթուղային անտեսու-  
թյան աշխատանքի մեջ լավագույն արդյունքները  
ձեռք բերելու համար, վորպիսին հիմք և ծառայում  
յերկաթուղային արանսպորտի աշխատավորների նյու-  
թական և կուլտ-կենցաղային մակերեսի անդրագույն  
բարելավման համար»:

Անցած տնտեսական տարվա արդյունքները ընու-  
րոցում են յերկաթուղային արանսպորտի աշխատու-  
նակության անդրագույն աճեցումը: 1928/29 թ. պլա-  
նով նախագծված եր բեռնային շրջանառությունը  
162.7 միլիոն տոննա, իսկ փաստորեն իրավործված ե  
176 միլիոն տոննա, այսինքն պլանը գերազանցված  
է 7.5 տոկոսով:

Զգալի կերպով բարելավմած և շարժական կազ-

մի ոգտագործումը և նորոգումը։ Մասնավորապես, մի շոգեշարժի հիմնական նորոգման ծախսը մարդաժամերով 1928/29 թ. նախահաշվով սահմանված 10.900 մ/ժ. իջեցրած և մինչև 9.670 մ/ժ., ըստացիկ և միջակ նորոգման ծախսը 100 մարդատարի քլմ. համար 17.5 մ/ժ. փոխարեն իջեցրած և մինչև 15.85 մ/ժ.: Ապրանքային վագոնների ընթացիկ նորոգման ծախսը 10 հազար առանցք-քիլոմետրի համար իջեցրած և 22-ից մինչև 17.2 մ/ժ.: Ապրանքա-մարդատար գնացքների միջակ կազմը 98 առանցքի փոխարեն բարձրացել և մինչև 99.8 առանցք։ Կան նաև ուրիշ նվաճումներ սահմանված չափանիկով։ Աշխատանքի ընդհանուր արտադրականությունը (մի աշխատավորի բեռնավորումը տոննա-քիլոմետրերով) մեծացել է 128.7 մինչև 140.7 տոննա-քիլոմետր, այսինքն 9.3 տոկոսով։

### Հացամթերման կամպանիայի արգելվելը

Սակայն վոչ բոլոր չափաններն են իրագործված։ Որինակ՝ շոգեշարժների որական անցուրզը ապրանքատարի յերթևեկում սահմանված եր 150 քլմ., իսկ իրագործված է 148.8 քլմ.: Շոգեշարժների ապարագուն անցուրզը սահմանված 28 տոկոսի փոխարեն հասել է 30.2 տոկոսի։ Մարդատար վագոնների միջակ նորոգումը, զորի համար սահմանված եր 1.850 մարդաժամ, վաստորեն կազմեց 1.925 մարդաժամ։ Շոգեշարժին բրիգադների ամսական անցուրզը նախահաշվով սահմանված եր ապրանքատարի համար 1.990 քլմ. և մարդատարի համար 3.200 քլմ., վաստորեն իրագործել են ապրանքատարի բրիգադները՝ 1.672

քլմ., մարդատարի բրիգադները՝ 2.759 քլմ.: Կոնդուկտորական բրիգադների անցուրզը նախահաշվով ապրանքատարի համար սահմանված եր 1.950 քլմ. և մարդատարի համար 3.800 քլմ., իսկ իրագործված և ապրանքատարի բրիգադների կողմից 1.730 քլմ. և մարդատարի բրիգադների կողմից 3.425 քլմ.։

Զավանների չիրագործումն ամպայման ազդեցություն ունեցավ փոխագործյունների հաջող ընթացքի և յերկաթուղ տրանսպորտի աշխատանքների ինքնարժեքի իջեցման վրա։ Մասնավանդ պարզ կերպով այդ թերությունները յերեան հանվեցին աշնանային հացամթերման կամպանիայի ժամանակը յերբ տրանսպորտի առաջ խնդիրը եր դրված—փոխադրել հացի բեռներն ավելի կարճ ժամանակամիջոցում համեմատած անցյալ տարիների հետ։ Զայած բոլոր միջոցների մորթիթացիային և այն բանին, վոր վերադասկամպակերպությունները ժամանակին եյին ուղարկել դիրեկտիվները, տեղերում այդ կարևորագույն խնդրի իրագործման համար պատրաստական աշխատանքը վորոշյալ ժամկետին չեր կատարված։ Այդ պատճառով մի շարք տեղերում տեղի ունեցան գնացքների կացուրդ (заторы)։ Ճիշտ և, յերբեմն դա կախված եր վոչ միայն յերկաթուղ, արանսպորտից, այլ և կիւնաներից, բայց և միենույն ժամանակ յերեան հանվեցին շատ մեծ թերություններ նաև հենց տրանսպորտի աշխատանքում։ Այդ հանդամանքն ստիպեց յերկաթուղ, միության կենտրոնին և ՀՃՖԿ-ին ձեռք առնել վճռական միջոցներ վերացնելու համար հայտնաբերված խզումները և թերությունները տրանսպորտի աշխատանքում։ Տրվեցին լրացուցիչ դիրեկտիվներ,

իսկ տեղերն ուղարկվեցին մի շաբք աշխատավորներ հանգույցները գնացքային խցաններից աղատելու, բեռներն արագ անցկացնելու, կլիյենտուրայի վրա սղմելու, յեկող բեռները յերկաթուղու պահեստային շենքերից ժամանակին դուրս տանելու համար ևն: Շնորհիվ այն բանի միայն, վոր ձեռք առնվեցին միջոցներ մորիկիցացիայի յենթարկել բոլոր միջոցները և բանվորական մասսաները՝ դժվարությունները հաղթահարելու համար, մենք կարողացանք ընթացիկ տնտեսական տարում լուծել հացի փոխադրության կարևորագույն խնդիրը:

Յերեան հանած թերությունները հենց տրանսպորտի կազմակերպության սիստեմի մեջ, նաև աղմինիստրատիվ-տեխնիկական զեկավարության մեջ, տընտեսական և միության կազմակերպությունները պետք է ժանրամասն կերպով ուսումնասիրեն և ձեռք առնեն վճռական միջոցներ, թույլ չտալու համար այդ թերությունների կրկնությունն առաջիկա 1929/30 տարում, յերբ շատ ավելի մեծ փոխադրություններ կինեն ամբողջ յերկաթուղային տրանսպորտում: Դրա հետ միասին հարկավոր է անցկացնել ամենախիստ միջոցառումներն արտադրության մեջ աշխատանքային կարգապահության ամրապնդման համար, մանավանդ այն աշխատավորների միջև, վորոնք կապ ունեն յերթեկի և բեռների փոխադրությունների հետ:

Տրանսպորտին վիճակված է առաջիկայում կատարել մեծ աշխատանք

Ամբողջ յերկրի սոցիալիստական տնտեսության

խոշոր աճեցումն առաջադրում է 1929/30 տարվա համար յերկաթուղային տրանսպորտային զգալիորեն մեծացրած ծավալով աշխատանք: Բեռների շրջանառությունը նախագծված է 220 միլիոն տոննա 1928/29 տարում իրագործած 176 միլ. տոննայի դիմաց և 185.9 միլ. տոննայի դիմաց, վոր նախագծված է հնգամյակով այս տարվա համար: Ուղերների փոխադրությունը մեծացրած է մինչև 34 միլիոնդր ուղերների լուծեար ընթացիկ տարում իրագործած 29.7 միլիոնդր դիմաց: Աշխատանքի ընդհանուր չափը մեծանում է 20 տոկոսով 1928/29 տարում փաստորեն իրագործվածի դիմաց: Աշխատանքի արտադրականությունը (մի աշխատավորի բեռնավորումը տոննա-քիլոմետրով) մեծանում է 22.5 տոկոսով 1928/29 տարում փաստորեն իրագործվածի դիմաց: Յերկաթուղային տրանսպորտի փոխադրությունների աշխատանքների ինքնարժեքը պետք է նախահաշվի դիմաց իջեցնվի 13.5 տոկոսով և 1928/29 տարում փաստորեն ձեռք բերած 7.5 տոկոսի դիմաց:

Շարժական կազմի նորոգման աշխատանքի արտադրականությունը պետք է մեծացնվի ի դիմաց 1928/29 տարում փաստորեն ձեռք բերածի-շողեցների հիմնական նորոգման մեջ 18 տոկոսով, ապրանքային վագոնների պայմանադրական զննության մեջ 16.4 տոկոսով, մարդատար վագոնների նորոգման մեջ միջին թվով 9 տոկոս ևն: Շոգեշարժների որական անցուրդն ապրանքատարի յերթեկեկի մեջ պետք է մեծանա 14.9 տոկոսով, մարդատարի յերթեկեկի մեջ 9.6 տոկոսով, ապրանքային վագոնների անցուրդը 46.9 տոկոսով: Շոգեշարժային բրիգադների անցուրդն

ապրանքատարի յերթեկի մեջ՝ պետք է մեծանա 33 տոկոսով, մարդատարի յերթեկի մեջ 8 տոկոսով. կոնդուկտորական բրիգադների անցուրդն ապրանքատարի յերթեկի մեջ—11.7 տոկոսով, մարդատարի յերթեկի մեջ—14.6 տոկոսով՝ 1928/29 տարում փաստուեն ձեռք բերածի դիմաց:

### Ավելի լայն ընդարձակել մրցակցությունը

Հնգամյակի յերկրորդ տարում յերկաթուղային տրանսպորտի առաջ գրված խնդիրները հաջողությամբ լուծելը պահանջում է ուժերի մաքսիմալ լարումն և նախաձեռնությունն տնտեսական, միության կազմուկերպությունների և տրանսպորտի բոլոր աշխատավորների կողմից: Այս կամ այն ձեռնարկի դեկավարները պետք են կենտրոնացնեն իրենց ձեռքում տնտեսական կյանքի լրիվ կառավարչությունը և սոհմաննեն արտադրության կառավարչության այնպիսի կարգ, վորը կյերաշխավորե արտադրության մեջ զրադգած անձի պատասխանատվությունը նրան հանձնարարած գործի համար: Հարկավոր է այնպիսի կարգ ստեղծելը վորն առիթ չի տա անպատասխանատվությանը և փաստական անիշխանությանը արտադրության մեջ, վորպիսի հանդամանքը բդիմում է մի մարմնի խառնը վելուց մյուս մարմնի փունկցիաների մեջ: Դրա հետ միաժամանակ հարկավոր է ավելի լայն կերպով ընդարձակել սոցիալիստական մրցակցությունն տրանսպորտի աշխատավորների միջև, զարգացնել հարվածային բրիգադների, համբարությունների, գործարանների, հերթափոխների, գործարանների և ուղեմասների ցանցը: Հար-

կավոր ե ամեն կերպ քաջալերել տեղերի, բանվորդյուտարարների և միության բոլոր անդամների նախաձեռնությունն արտադրական խորհրդակցությունների աշխատանքի ընդարձակման միջոցով, վորն ուղղված է գեպի յերկաթուղային տնտեսության զարգացման, վերակառուցման և սացիոնալիզացիայի խնդիրների հաջող իրագործումը:

Հավաքպայմանագրի կամպանիան անցկացնելու վերաբերյալ տված գիրեկափում ԱՄՀԿի ցույց տվեց, վոր «Հավաքպայմանագրերը վերակնքելու ժամանակ արհմիության և տնտեսական մարմինները պետք ե այնպիս զուգավորեն բանվորական մասսաների պահանջները սոցիալիստական շինարարության զարգացման շահերի հետ, վորպեսզի ապահովի արտադրական-տնտեսական խորհրդների իրագործումը մի կողմից և մյուս կողմից ապահովի բանվորական դասակարգի անտեսական և կուլտ-կենցաղային զրության անդրագույն բարեկավորման արդյունաբերական-ֆինանսական պլանի սահմաններում: Միաժամանակ լավացնելով արհմիությունների աշխատանքը բանվորայողների նյութական կենցաղային և կուլտուրական կարիքների սպառապահման բնագավառում, համակերպելով և կապակցելով յուր աշխատանքը բանվորական դասակարգի ընդհանուր շահերի հետ, արհեստական միությունների մարմինները պետք ե վճռականորեն պայքար մղեն բանվորների առանձին խմբերի յետանիաց և հաճախ պոկատող (քաշօքսի) տրամադրությունների գեմ, ցույց տան վճռական գիւղադրությունն հականեղափոխական արբերի յելույթներին, արոցկիստական և ամեն տեսակի ոպորտու-

Նիստական տրամադրությունների մնացորդներին, հենվելով այդ պայքարում բանվորների առաջավոր և ակտիվ շարքերի վրա»:

Առաջարված խնդիրների իրագործման այդ հայցակետի հիման վրա կնքվեց նոր ընդհանրական պայմանագիրը ՀՃԺԿ-ի և յերկաթուղ. միության կենտրոնի միջև 2 տարի ժամանակով։

## ՀԱՎԱՔՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՈՒՄԸ

Շտկել տեղական միության կազմակերպությունների սխալները

Մեր միության 9-րդ համագումարը գիրեկտիվներ տվեց, վորպեսզի ընդհանրական պայմանագիրը վերակնքելու ժամանակ իրոք ապահովվի միության լայն մասսաների ակտիվ մասնակցությունը և բավականաչափ ժամանակ տրվի նրանց պայմանագիրը մըշակելու համար։ Հաշվի առնելով այդ գիրեկտիվները, յերկաթուղ. միության կենտրոնը 1927 թ. ոգոստոսի 17-ին հրապարակեց նոր ընդհանրական պայմանագրի նախագիծը։ Սյնուհետև սեպտեմբերի 26-ին միության կազմակերպություններին տրվեցին սպառվող գիրեկտիվ ցուցումներ բանվորական բրիգադներ ստեղծելու մասին, ներքոքավելով նրանց մեջ միության անդամների լայն մասսաները հավաքպայմանագրի նախագիծը մշակելու և գործող պայմանագիրն ստուգելու համար։ Այդ գիրեկտիվում տրվեցին տրանսպորտի ա-

առջիկա աշխատանքի բոլոր հիմնական կանխական թվական ցուցիչները, չափանները, աշխատավարձի աճումը, բնակարանաշինության, աշխատանքի պաշտպանության, կենցաղի ֆոնդի և այլ կարիքների ծախսերը 1929/30 տարում։

Զնայած այն բանին, վոր բավականին ժամանակ և միանգամայն սպառվող գիրեկտիվ ցուցումներ տրվեցին հավաքպայմանագրի մշակման և ստուգման մասին, այնուամենայնիվ մի շարք տեղական կազմակերպություններում այդ աշխատանքը շատ անբավարար և անցել։ Մի քանի միության կազմակերպություններ չափաղանց դանդաղաշարժ յերևացին և ուշ մկնեցին անցկացնել այդ աշխատանքը։ Մտուգողական բրիգադները ժամանակին չեն նշանակվել շատ տեղերում հավաքպայմանագրի մշակումը և ստուգումն անցել և նեղ մասնաժողովային կարգով առանց միության անդամների լայն մասսաների մասնակցության։ Միության կենտրոնի նախագահությունն այդ հարցի առթիվ հոկտեմբեր ամսում նորից հատուկ վորոշում կայացրեց, առաջարկելով այդպիսի միության կազմակերպություններին անհապաղ շակել և նորից վերափոխել ամբողջ աշխատանքը, վորը չի համապատասխանում այդ կարևորագույն քաղաքական-տնտեսական կամպանիան անցկացնելու հիմնական մոմենտներին։

Գործող հավաքպայմանագրի ստուգման արդյունքները ցեղ միության չեն հայտնաբերված լրիվ նյութեր չունենալու պատճառով։ Սակայն, կանխական տվյալների համաձայն արդեն կարելի յէ յեզրակացություն հանել այն մասին, վոր տեղերում յեզել

են հավաքպայմանագրի ամենակոպիտ կերպով խախտելու դեպքեր: Այդ խախտումներն առաջ են յեկել վոչ թե որյեկտիվ պատճառներից կամ ֆինանսական հասրավորություններ չլինելուց, այլ անտեսական և միության կազմակերպությունների բացառիկ անուշագրությունից և անպատճառի անապահությունից: Ընդհանրական պայմանագրի նախագիծը մշակելիս միության շատ կազմակերպությունների մեջ հիմնականում զգալի բեկում և առաջ յեկել դեպի այդ աշխատանքի լավացումը համեմատած անցյալ կամպանիաների հետ, շատ տեղերում ստեղծվել են ստուգողական բրիգադներ, զորոնց մասնակցել են միության հավարագոր անդամներ: Բայց և զրա հետ միասին առանձին տեղերում կան դիրեկտիվների կոպիտ խախտումներ հավաքպայմանագրի նախագիծի մշակման շուրջը: Որինակ՝ Սրբամայան ճանապարհի կալուժակի ուղեմարհներն սահմանափակվեց շրջաբերական ուղարկելով միայն, իսկ զործնական ոգնություն տեղերին չտվեց: Հարավ-Սրբելյան ճանապարհության միության տեղերին տվեցակի ճանապարհության մասնակի ուղեմարհներն սահմանափակվելու և մորիկիզացիայի յենթարկելու միության անդամներին այսպիս կամպանիան անցկացնելու համար: Նրանք չեն վերակառուցել իրենց աշխատանքի մեթոդները և լավագույն զեղչում սահմանափակվել են վոչ միանգամայն պարզ և սպառվող դիրեկտիվներով, չեն համախմբել մասսաները անտեսական խնդիրների հաջող իրագործման և այդ կարեռ փաստաթղթերի մշակման շուրջը: Միության բոլոր կազմակերպությունները, զորոնք հավաքպայմանագրի կամպանիայի ժամանակ թույլ են տվել նման սիրաներ և խեղաթյուրումներ, պետք են վճռականացնել շտկեն բոլոր թերությունները նոր հավաքպայմանագրի բացաբարական կամպանիան անցկացնելու ժամանակ, զորպիսին ույժի մեջ և մտել 1930 թ. հունվարի մեկեց:

ստուգման մասին, վորովհետև ուղեմարհկոմիտեն վոչ մի դիրեկտիվ չի տվել: Հյուսիս Կովկասյան յերկաթուղթը Ստավրոսովի հանգույցում հավաքպայմանագրի մշակումը զարձել եր մի բալագան:

Կան և մի շարք այլ փաստեր, վորոնք հավաստում են այն, վոր գեռ ելի շատ տեղական միության կազմակերպություններ չեն պարզել իրենց համար ամբողջ կարեռությունն ու պատասխանատվությունը քաղաքական-անտեսական այդ կարեռագույն կամպանիան անցկացնելու համար: Նրանք չեն վերակառուցել իրենց աշխատանքի մեթոդները և լավագույն զեղչում սահմանափակվել են վոչ միանգամայն պարզ և սպառվող դիրեկտիվներով, չեն համախմբել մասսաները անտեսական խնդիրների հաջող իրագործման և այդ կարեռ փաստաթղթերի մշակման շուրջը: Միության բոլոր կազմակերպությունները, զորոնք հավաքպայմանագրի կամպանիայի ժամանակ թույլ են տվել նման սիրաներ և խեղաթյուրումներ, պետք են վճռականացնել շտկեն բոլոր թերությունները նոր հավաքպայմանագրի բացաբարական կամպանիան անցկացնելու ժամանակ, զորպիսին ույժի մեջ և մտել 1930 թ. հունվարի մեկեց:

Պայմանագիրը պարտավորություն ե յերկու կողմերի համար

Անցնելով նոր հավաքպայմանագրի բովանդակությանը և փոփոխումներին, հարկագոր և կանգ առնել նրա հիմնական մոմենտների վրա, վորոնք պետք ե առանձնապես մանրագննին և խորը մշակվեն միու-

թյան անդամ—յերկաթուղականների լայն ժողովներում: 1929 թ. գեկտեմբերի 21-ին «Գուղոկ» թերթում հրապարակված նոր հավաքպայմանագիրը, վոր կընդգած և ՀՃԴԿ-ի և յերկաթուղ. կենտկոմի միջև յերկու տարի ժամանակամիջոցի համար (1930 թ. հունվարի 1-ից մինչև 1931 թ. գեկտեմբերի 31-ը), հանդիսանում և քաղաքական և տնտեսական խոշոր կարևորություն ունեցող մի փաստաթուղթ: Տվյալ պայմանագիրը հանդիսանաւ և մի պարտավորություն յերկու կողմերի համար: Դա բղխում է նրա հիմնական հոդվածների իսկական բովանդակությունից, փորձիսին պետք և առանձնապես պարզ և փորոշակի պարզաբանվի միության անդամների լայն մասսաներին:

Հավաքպայմանագրի մեջ առաջին անգամ կոնկրետ և փորոշակի կերպով դրված և հարց այն մասին, վոր սոցիալիստական շինարարությունը և գյուղատնտեսության վերակառուցումն արագ կերպով իրականացնելու համար, փորպես անհրաժեշտ մի պայման ամրապնդելու պրոլետարական դիկտուրալուրան, յերկրի պաշտպանությունը և բանվորական դասակարգի նյութական-կենցաղային և կուլտուրական դրության բարեկավումը,—տնտեսական մարմինները, արհեստակցական կազմակերպությունները և յերկաթուղային տրանսպորտի բոլոր բանվորներն ու ծառայողները պարտավոր են ձեռք առնել իրենցից կախված բոլոր միջոցները՝ իրագործելու համար կոնտրոլային թվերը բոլոր այն չափանների, նախահաշիմների և աշխատանքի պլանների համաձայն, փորոնք արված են թե առանձին ճանապարհներին ու ձեռնարկներին և թե ամբողջ տրանսպորտին 1929, 30 թ. համար: Այդ

պարտավորությունը, վոր գրասված և պայմանագրի մեջ, լրւրջ պատասխանատվություն և դնում միության բոլոր անդամների վրա և պահանջում և ամեն մի աշխատավորից նրան հանձնարարած աշխատանքի կոնկրետ և ճշգրիտ իրագործումն: Հետագայում այդ հայեցակետով այսինքն՝ նայած թե ինչպես և ինչ չափով են իրագործված ամեն մի մարմնի և աշխատավորի առաջ դրված խնդիրները, կնայիլ և կզնահատվորի առաջ դրված խնդիրները, միության մարմինների և յերկաթուղային արանսպորտի ամեն մի աշխատավորի աշխատունակությունն առանձին:

Ընդունություն յիշ արձակումը միավարության  
հիման վրա

Հավաքպայմանագրի առաջին տրոհի մեջ ընդհանուր կանոններում առանձին փոփոխումներ անցյալ պայմանագրի հետ համեմատած չեն մտցրած, բացառությամբ 3-րդ հոդվածի, վորտեղ ցույց և տրված, վոր ՀՃԴԿ-ի սահմանաշիվների հետ կապ ունեցող պայմանագրի հոդվածները գործում են մի տարի ժամանակով, այսինքն՝ 1930 թ. հունվարի 1-ից մինչև 1930 թ. գեկտեմբերի 31-ը:

«Բնդունումը և արձակումը» տրոհի մեջ առանձնապես փայլուն կերպով արտացոլում և կուսակցության հիմնական դիրեկտիվը՝ արտադրությունը կառավարելու և միավարությունը սահմաննելու միջոցների մասին: Չսայած յերկաթուղ. տրանսպորտը կառավարելու և ղեկավարելու կենտրոնացրած սիստեմին, հաճախ մի մարմնի գունկցիաները խառնվում են մի

այլ մարմնի գունկցիաների հետ, ստվերվում և կուրիշի վրա փոխադրվում անձնական պատասխանատվությունը։ Ուստի յերկաթուղային արանսպորտի վրա այդ դիրքեկտիվը պետք է անցկացնվի առանձնապես համառորեն և վորոշակի։

Այդ դիրքեկտիվի հայեցակետով՝ ինչպես յերկում և պայմանագրից, նորից վերամշակվեց բանվորների և ծառայողների ընդունման և արձակման կարգը, պահպանելով Աշխաղղոմատի մարմինների հիմնական որենսդրությունն այլ հարցի վերաբերյալ։ Աղմբնիստրացիայի վրա լիակատար պատասխանատվություն և գրվում իրապես պահանջվող և անհրաժեշտ բանույժի կանոնավոր վարձման համար։ Առանձնապես կարելով պայման, վոր գրառված և նոր պայմանագրի մեջ, հանդիսանում է Աշխաղղոմատի մարմինների հետ հատուկ պայմանագրեր կնքելու կարգը, վոր վերաբերում և բանույժի ուղարկման և առանձին կաթեգորիաների կողմից աշխատանք ստանալու առավելական իրավունքին։ Միության կազմակերպությունները պետք ե ամենակարճ ժամանակամիջոցում ձգտեն այդ միջոցառումներն անցկացնելուն և վերացնեն մինչև այժմ տեղի ունեցած պատասխանականացնելու առաջնականացնելու մասին ամենակարճ ժամանակամիջոցից հետո նորից ընդունվում եր բանույժ և վորակով ավելի ցածր։

Պայմանագրի կետերում արձակման կարգի մասին մտցրած և վորոշ պարզություն, վորը համապատասխանում և տեղերից ստացված առաջարկներին նախադիմ մշակելու ժամանակ։

Ինչպես կարող են անցնել կրնատումները

9-րդ հոդվածի «ա» կետը պարզ ցույց է տալիս,

աշխատավորների զգալի թիվ կրծատելու ժամանակ, 25 մարդուց վոչ պակաս, վորոշ ձեռնարկում (գործարան, զին, արհեստանոցներ, քարշի և կապի ուղեմտաներ, արտակարգային և առաջին կարգի կայարաններ), միության մարմինները պետք է ազդարարվեն նախորդ վոչ ուշ քան մի ամիս առաջ մինչև առաջիկա արձակումը։ Այդ պայմանը հնարավորություն է տալիս տնտեսական և գլխավորապես միության կազմակերպություններին ուշագրությամբ և մանրազններին մշակել կրծատման հարցը, վորակովի նա իրոք կապակցված լինի թե արտադրության և թե որանուն պորտի աշխատավորների շահերի հետ։ Բացի գրանից հչեն լինի այնպիսի գեղքեր, ինչպես յերբեմն մինչև այժմ լինում ենին, այն և այսոք կրծատվում եր բանույթի վորոշ քանակ տուանց հաշվի առնելու այս կամ այն ձեռնարկի աշխատանքի և զարգացման հեռարկաները, իսկ մի փոքր ժամանակամիջոցից հետո նորից ընդունվում եր բանույժ և վորակով ավելի ցածր։

Ընտականապես պայմանական ձգությունների դեմ այսպիսի առթիվ տեղերից ստացվել են այսպիսի առաջարկներ—յիթե գործը զարգարեցնվում է կամ գատարանով արդարացնվում են աշխատավորները, վորոնք արձակված են նրանց գեմ քրեական գործեր հարուցելու ժամանակ, յիթե այդ դործերը կազմունեն նրանց կատարվող աշխատանքի հետ, գնարիլ հարկադրված գործարության (պրոցյալ) ամբողջ ժամանակի համար։ Այդ առաջարկները չեր կարելի ընդունել և մտցնել հավաքաղայիմանագրի մեջ, նախ այն,

Վենականապես պայմանական ձգությունների դեմ

Այս հոդվածի առթիվ տեղերից ստացվել են այսպիսի առաջարկներ—յիթե գործը զարգարեցնվում է կամ գատարանով արդարացնվում են աշխատավորները, վորոնք արձակված են նրանց գեմ քրեական գործեր հարուցելու ժամանակ, յիթե այդ դործերը կազմունեն նրանց կատարվող աշխատանքի հետ, գնարիլ հարկադրված գործարության (պրոցյալ) ամբողջ ժամանակի համար։ Այդ առաջարկները չեր կարելի ընդունել և մտցնել հավաքաղայիմանագրի մեջ, նախ այն,

վոր գրանք հակասում են որենսդրության, վորը հաստատես ստիճանում և նման գեպքերում վերականգնում և վճարժան կարգը վորոշյալ ժամանակամիջոցի համար՝ վեց ամսից վոչ ավելի: Յերկրորդ—այդ առաջարկները տեղերից չեն լուծում մեր դատական հիմնարկներում զեր ելի կոյություն ունեցող ձգձըդումների և բյուրոկրատիզմի զեմ պայքար սղելու հարցը: Ընդհակառակը, նրանք կոժանդակելին ձգձըդումներին և առաջ կը երեխին պետական միջոցների մեծ ծախսեր, վորոնք միևնույն ժամանակ չեյին արդարացնվի վոչ մի արտադրական աշխատանքով:

### Բանույթի կարգավորումը, համակերպելով արարության հետ

Առանձին ուշագրություն պետք է դարձնել բանույթի կարգավորման արոհին, վորը վերակազմած և հիմովին: Տրոհի մեջ մտցրած են վորոշ պարզություն և ճշտություն: Անհրաժեշտ ե տնտեսական և միության կազմակերպություններին դործ դնել բոլոր ջանքերը, վորպեսզի այդ արոհը լիովին իրագործվի ամենակարծ ժամանակամիջոցում, ավելի լրիվ և վորոշակի անդրագառնա գործնական աշխատանքի մեջ:

Այդ արոհի 10-րդ հոդվածն ամբողջությամբ պատասխանում և յերկաթուղ, տրանսպորտի առաջ դըրված տնտեսական խնդիրներին: Հոդվածը ցույց է տալիս, վոր բանույթի քանակի վորոշումը պետք է խրստըն համապատասխանե տեղական պայմաններին, արտադրական նվաճումներին և պատվիրանքներին, նորմերին և ծրագրներին: Ընդ ամին աղմինիստրա-

ցիան կրում և լիտկատար պտտասխանություն աշխատանքների կազմակերպման և բանույթի ընտրանքի և ոգտագործուան համար:

### Լիովին ոգտագործել վորակյալ ույժը

Այս արոհի 11-րդ հոդվածը մտցնում է միանգամայն պարզ և նոր ոլլանային կարգ բանույթի կարգավորման մասում: Այս հոդվածի համաձայն պետք է նշանակվեն տնհատապես պատասխանատու անձեր բանույթի կարգավորման, նրա կանոնավոր հաշվառքի, պահանջի և ավելցուկի համար:

Հավաքապայմանագրի 12-րդ հոդվածում սահմանված և կարգը, թե ինչպես պետք է կարգավորել և ոգտագործել վորակյալ և գժգարությամբ փոխարինելի բանույթի մշտական կալերը: Բանույթի ավելցուկը յերեան հանձնու դեպքում պետք է խստությամբ անցկացնվեն հետևյալ միջոցառումները, — վերափորակավորել և վերախմբավորել այլ պաշտոնների համար, փոխադրել այլ արենտանոցները և ուղեմտաները վոչ թե միայն յուր այլ և ուրիշ ճանապարհների սահմաններում, արձակուրդ տալ առանց սոնկի, հանձնել ավարակյալ բանույթի ավելցուկը նոր կառուցվող ճանապարհներին և ճյուղերին: Յեկ, վերջապես, յեթե բայց և այնպես անկարելի յե արանսպորտում ոգտագործել այդ բանույթը, պետք է միջոցներ ձեռք առնըներին հանձնելու այդ բանույթը ժողովրդական տընտեսության այլ ճյուղերին:

Բանույթի կրծատման անհրաժեշտության դեպքում կարականապես արգելվում է արձակել հին և

արժատական բանվորներին, միաժամանակ վարձելով նոր բանվորներին, վորոնք դյուզից են յեկել: Բացի դրանից, ուշադրություն ե դարձրած այն բանի վրա, վոր անհրաժեշտ է պահպանել արտադրության մեջ նոր բանվորական կադրեր, վորոնք բաց են թողնը-վում ֆարգործուսի դպրոցներից:

Այս խոչընագույն աշխատանքը, վոր միանգա-  
մայն նոր և շատ կազմակերպությունների համար,  
պահանջում է խսկական պատասխանառվություն և  
նախորոք մանրամասնորեն մշակված պլան: Դա, ան-  
կասկած, կհանդիպե մի շարք դժվարությունների:  
Բայց հարկավոր է նիշել վոր քանի շատ են գժվա-  
րությունները, վորոնք կանգնած են մեր խնդիրների  
իրազործման ճանապարհի վրա, այնքան նրանք ավել-  
ի պետք ե տուած ընթեռ եներդիքա և նախաձեռնու-  
թյուն դժվարությունների հաղթահարման համար:  
Միայն այն ժամանակ մենք կստանանք այդ աշխա-  
տանքի խսկական և կոնկրետ հետևանքներ, վորովհե-  
տեւ նրանք սերտ կերպով կապված են յերկաթուզային  
տրանսպորտի ռացիոնալիզացիան և վերակառուցումը  
հաջողությամբ անցկացնելու հետ:

Բարձրացնենի աշխատանի արտադրականությու-  
նը աշխատանի ժամանակի լավագույն ոգտա-  
գործման հիմունքով

Աշխատանքի ժամանակի հարցերը չեն վերանայ-  
վել վորովհետև մոտ ժամանակում կառավարությունը  
պետք ե հրապարակի հատուկ որենք աշխատանքի  
ժամանակի մասին յերկաթուզային արանսպորտում:

Ուստի համաձայնությամբ ՀՃՓԿ-ի և միության Կենտ-  
կոմի մինչև 1930 թ. մարտ ամիսը ույժի մեջ ե մը-  
նում գործող որենսդրությունը բոլոր յեղած փոփո-  
խումներով: Այդ ժամանակամիջոցում հիշյալ հարցը  
կստանա վերջնական ձևակերպումը, կամ կհրատա-  
րակի որենք բոլոր առդիրներով, կամ թե գործող ո-  
րենսդրությունը կվերամշակվի մեր տնտեսության պա-  
հանջների և յերկաթուզականների աշխատանքի պայ-  
մանների համապատասխան: Ընդ սմին հաշվի կառնը-  
վեն բոլոր այն նպատակահարմար առաջարկները, վո-  
րոնք ստացվել են տեղերից հավաքպայմանագրի նա-  
խագիծը մշակելու ժամանակի

Բայց անկախ այդ բանից, տեղական տնտեսա-  
կան և միության կազմակերպությունները պետք ե  
իրենց հիմնական խնդիրը ունենան՝ ձգտել վերացնելու  
գործալքությունները և պարագաւրդները ձեռնարկի  
մեղքով, մանավանդ իրենց, աշխատավորների մեղքով,  
և աշխատանքի ժամանակի վոչ ռացիոնալ ձևով ոգ-  
տագործելը: Բոլոր այն փոփոխումները, վոր մտցված  
են այդ հարցի մեջ որենքի կարգով կամ իրքեւ լրա-  
ցուցիչ համաձայնություն ՀՃՓԿ-ի և յերկաթուզ.  
Կենտկոմի միջև, ուղղված կլինեն գեպի այն, վորպես-  
զի ստացվի աշխատանքի ավելի մեծ արտադրականու-  
թյուն, համեմատած այն արտադրականության հետ,  
վորպիսին մենք ունենք այժմ:

# ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ

Նախահաւային աստիճաններից բարձր

Ընթացիկ տնտեսական տարում աշխատավարձի արձրացման և կարգավորման մանրամասն կարգը չուղարարակած եր «Գուղոկ» թերթում 1929 թ. դեկտեմբերի 17-ին և 24-ին, վորտեղ գետեղած ելին սպառվող զիրեկախվեր և պարզաբանումներ աշխատավարձի հարցերի վերաբերյալ: Դա պետք է և ծառայի իրեն հիմնական փաստաթուղթ բանվորների լայն ժողովներում աշխատավարձի հարցը պարզաբանելու ժամանակ:

Բացի դրանից, անհրաժեշտ և նկատի ունենալ հետեւյալ հանդամանքները: Անցած տնտեսական տարվա ընթացքում աշխատավարձի մեծցումը միջին թըգով մի աշխատավորի վրա վերազանցեց կրնարուային թվերից: Նախահաշվով սահմանված եր միջին աշխատավարձ մի աշխատավորի համար 77 ր. 50 կ., իսկ փաստորեն նա հասավ 78 ր. 07 կ.: Այդ բարձրացումը բացատրվում է մասամբ յերկաթուղականների հիմնական խմբերի աշխատանքի արտադրականության աճեցումով: Այսպես՝ ըստվործյա աշխատավորի միջին աշխատավարձը զիլս: արհեստանոցներում նախահաշվով սահմանված եր 89 ր. 87 կ., իսկ փաստորեն սեպտեմբեր ամսում նա հասավ 95 ր. 50 կ.: Բացի դրանից անց եր կացրած աշխատավարձի ոեֆորմ 2 և 3 ցանցերով, վորը նույնպես բարձրացրեց միջին թվով աշխատավարձն ամբողջ յերկաթուղային տրանսպորտում: Ոեֆորմից հետո վերատարիֆագրվեցին մի շարք

աբտագրականապես կարենը աշխատավորների խմբեր, ոտ ել յուր հերթին աւաջ բերեց աշխատավարձի մեծացումն:

1929/30 թ. համար աշխատավարձի կարգավորման հարցը լուծելիս ՀՃՖԿ յուր կարգադրության տակ ուներ լրացուցիչ ֆոնդ ըստ նախահաշվի՝ գումարով 21,750,000 ր., հաշվելով 1928/29 թ. նախահաշվային աշխատավարձի մեծացումը 7,20% -ով: Լրացուցիչ համաձայնությամբ ՀՃՖԿ-ի և յերկաթուղայի կենտկոմի միջև այդ ֆոնդը զգալի կերպով մեծացրած է, մոտավորապես մինչև 34 միլիոն ըուբելի: Այդպիսով, ընթացիկ տնտեսական տարում մի աշխատավորի նոմինալ աշխատավարձի միջին աճեցումը տրանսպորտում 1928/29 թ. նախահաշվի դիմաց մեծացել է 9 տոկոսով: Իսկ աշխատավարձի աճեցումը միմիայն բանվորական ցանցով կազմել է 8,20%: Աշխատավարձի այդ զգալի աճեցումը յերկաթուղային տրանսպորտում ընթացիկ տնտեսական տարում բարձր է քան ժողովրդական տնտեսության այլ ճյուղերում և առաջ է յեկել նա այն պատճառով, վոր մի շարք արտադրականապես կարենը աշխատավորների խմբերի և, մանավանդ մասնագետների աշխատավարձը զգալի կերպով յետ եր ննացել աշխատավարձի միջակ մակերեսից տրդյունաբերություններից մեջ: Ամբողջ արդյունաբերությունն ընթացիկ տնտեսական տարում ստացել է աշխատավարձի լրացուցիչ մեծացման ֆոնդ 40 միլիոն ըուբելի չափով, վորը հնարավորություն տվեց արդյունաբերությանը մեխանիկորեն բարձրացնել գոյություն ունեցող աշխատավարձը 1,80% -ով: Իսկ տրանսպորտն ստացավ ընդհանուր աշխատավարձի մեծացումը, ինչպիս

վերն եր ցույց արված, աշխատավորների բոլոր խըմբերում  $90/0$ -ով և բանվորական ցանցով  $8,20/0$ -ով:

Հիմնական սպատվիրանք ինչպիս արդյունաբերության, այնպես և տրանսպորտի համար կայանում են պահանում, վորակեսղի իրագործվեն կոնտրոլային թվերը աշխատանքի արտադրականության աճեցման վերաբերյալ, վորոնք մի աշխատավորի համար միջին թվով արտահայտվում են  $22,50/0$ -ով, իսկ ըստ առանձին խմբերի համարում են  $330/0$ -ի ( $\gamma$ ոգեշարժային և գնացքային բրիգադներ): Բացի գրանից, անհրաժեշտ ե ձգել իշեցնելու փոխադրությունների ինքնարժեքը  $7,50/0$ -ով:

Եվրո ույժերն աշխատավարձի իրական սակերեսը բարձրացնելու համար

Աշխատավարձի կարգավորման հարցերն ընթացիկ տարում զգալիորեն բարել են, վորովհետև աշխատավարձի աճեցումն աշխատավորների այս կամ այն խմբերի համար սերտ կապակցված ե աշխատանքի արտադրականության հետ, վորոն ամպայման ուղիղ և անհրաժեշտ պայման ե յերկաթուղային տնտեսության հաջող զարգացման համար: Աշխատավարձի կարգավորման այդ միջոցառումները կանոնավոր կերպով անցկացնելու համար ՀՃՁԿ և յերկաթուղ, կենտրոնը 1929 թ. դեկտեմբերի 17-ին և 24-ին տվեցին մանրամասն ցուցումներ և կարգադրություններ: Անհրաժեշտ ե բոլոր միության կազմակերպություններին և ակտիվին մանրամասն մշակել և պարզել, թե վորքան կարեր և անհրաժեշտ ե աշխատավարձի կար-

գավորման նոր կարգը: Հարկավոր ե պահանջել տնտեսական մարմիններից ամենամանրամասն հաշվարկ-կարգավորումն ըստ ամեն մի խմբի առանձին, վորոշակի և պարզ կերպով պարզաբանել բոլոր աշխատավորներին աշխատավարձի ավյալ կարգավորման անհրաժեշտությունը և նպատակահարմար լինելը, վորոշիսին կապ ունի աշխատանքի արտադրականության անդրագույն աճեցման հետ:

Հարկավոր ե կրկին անգամ ընդգծել յերկաթուղային տրանսպորտում մասնագետների վճարման հարցի կանոնավոր լուծումը: Մասնագետների վճարման գոյությունը ունեցող մակերեսը, վորը չափազանց յետ և մասցել համեմատած արդյունաբերության հետ, չեր կարող ապահովել տրանսպորտի հագեցումն այդ կվամիֆեկացիայի աշխատավորներով: Իսկ այդ հանգամանքը սպառնում եր յերկաթուղ, տրանսպորտում մտցրած խոշոր գրամական միջոցների հաջող և ուղիոնալ ոգտագործմանը և պատշաճ տեխնիկական դեկավարմանը յերկաթուղ, տնտեսության լայն սացիոնալիզացիան և վերակառուցումն անցկացնելու գործում:

Դրա հետ միաժամանակ աշխատավարձի հարցերում ծանրության ամբողջ կենտրոնը ներկայումս հարկավոր ե փոխազրել նրա իրական մակերեսի բարձրացման վրա: Վերագաս կազմակերպությունների պատվիրանքը—1929/30 թ. ձեռք բերել աշխատանքի իրական մակերեսի բարձրացումն  $120/0$ -ից վոչ պակաս, հաշվի առնելով նոմինալի ընդհանուր բարձրացում  $90/0$ -ով, ինչ ել վոր լինի պետք ե իրագործի: Աւտի բանվորների նպարակման հարցը, գների իջեցումը,

սպառողին ավելի լավ սպասարկելը, կոռակերատիվային  
կազմակերպությունների ձկունությունը պետք է միու-  
թյան մարմինների աշխատանքի մեջ գրավին հիմնական  
տեղը: Կոռակերատիվային աշխատանքի շուրջը հարկա-  
վոր և ստեղծել մասսայական ակտիվ, ոգնություն և  
կոնտրոլ: Ընդլայնել բանվորական ըրեգադների մորի-  
լիկացիայի փորձը սննդամթերքների պատրաստման  
նպատակով, ողնելու համար կոռակերացիայի մարմին-  
ներին և այլ մատակարարող կազմակերպություններին:

Դրա հետ միասին հարկավոր է իրական ակտիվ  
մասնակցություն ցույց տալ և առավելաչափ ոգնել  
բոլոր կազմակերպություններին կոլեկտիվ և խորհը-  
դային տնտեսությունների, կաթնային տնտեսություն-  
ների, բանջարանոցների, կենդանաբուժության զար-  
գացման գործում են: Այդ միջոցառութների իրակա-  
նացումը միակ և միանգամայն իրական ուղիներն են  
մեծացնելու պարենավորման ռեսուրսները յերկրում և  
բարելավելու բանվորական մասսաների նովարակումը:

### Ազտագործել և ներերի նախաձեռնությունը յեվ փորձը

Աշխատանքի վճարման գոյություն ունեցող սիս-  
տեմները, վոր ստուգված են յեղել շատ տարիների փոր-  
ձերով, հիմնականում թողնված են առանց փոփոխում-  
ների: Բայց կարգավորելու համար հարցն աշխատանքի  
վճարման նոր սիստեմների կիրառման հարավորու-  
թյան մասին, վորոնք մացնվում են անգական տնտե-  
սական և միության կազմակերպությունների նախա-  
ձեռնությամբ, աշխատանքի վճարման սիստեմի արո-

հի մեջ գրառված ե լրացուցիչ կետ, վորտեղ ասված ե,  
թե բոլոր նոր սիստեմները պետք ե ներկայացվեն  
ՀՃՁԿ-ին յերկու շաբաթ առաջ մինչև նրանց մտցնե-  
լը: Դա հնարավորություն կտա ժամանակին մտցնել  
անհրաժեշտ փոխոլումները, նաև ընդլայնել տեղերի  
փորձն ու նախաձեռնությունը՝ ուրիշ ճանապարհների  
վրա նպատակահարմար սիստեմը կիրառելու համար:

Դրա հետ միասին, բոլոր տնտեսական և միու-  
թյան կազմակերպությունների խնդիրն ե հանդիսա-  
նում ամենամարդասան և խոր կերպով ուսումնասի-  
րել ներկայումս գործող աշխատանքի վճարման սիս-  
տեմները, նպատակ գնելով մտցնել անհրաժեշտ ուղ-  
ղումները և փոփոխումները, վերացնել բոլոր այն թե-  
րությունները, վորոնք ազգում են աշխատանքի ար-  
տադրականության հաջող աճեցման վրա:

### Նորմեր յեվ գնահատումներ

Աշխատագործման նորմերի և գնահատումների  
որոնը (հավաքայմանագրի 16-րդ հոդված) մշակված  
ե չափազանց մանրամասն: Հաշվի յեն առնված առա-  
ջարկները տեղերից, վոր ստացվել են այդ հարցի վե-  
րաբերյալ, նաև աշխատանքի արտադրականության  
մեծացման պատվիրանքները, իսկ սրանից ել բցիսում  
ե ինքնարժեքի եժանացումը: Այդ աշխատանքը շատ  
բանում կարգած ե նրանից, թե վորքան հաջողու-  
թյամբ կանցնեն աշխատագործման և գնահատումների  
կանոնավոր սահմանված նորմերը: Այդաեղ վճռական  
գեր և խաղում տեխնիկական նորմայացումը և գրա-  
հիման վրա սահմանված աշխատագործման իսկական

մաքսիմալ հնարևավորության տեխնիկական նորմերը:  
Ուստի արտադրության մեջ տեխնիկական նորմայաց-  
ման կիրառումն ամպայման պարտավորեցուցիչ և  
հանգիստանում ինչպես տնտեսական, այնպես և միու-  
թյան կազմակերպությունների համար:

Աշխատագործման նորմերի վերանայման պլա-  
նային կարգն ընթացիկ տնտեսական տարում պետք  
է լիովին իրականացնվի և անցկացնվի խռառությամբ  
հավաքայմանազրի 16-րդ հոդվածի հիմունքով: Այդ  
16-րդ հոդվածով նորից սահմանված և ըստգործյա-  
գնահատումների վորոշման կարգը Նախկին գործակցի  
(Կօֆիսիենտ) փոխարեն, վոր սահմանված եր աշխա-  
տավարձի ռեֆորմի ժամանակ, ներկայումս գնահա-  
տումները պետք և սահմանվեն աշխատագործման նոր  
սահմանված նորմերի համար, բազմապատկելով տա-  
րբախին կոպարի նորմի վրա, վրան հաշվելով (վրա-  
յեկ) վերավաստակի (պրիրածուք) սիջին տոկոսը, վո-  
րը ձեռք և բերված տվյալ ձեռնարկում վերջին յերեք  
ամսվա ընթացքում: Գնահատումների վորոշման նոր  
սահմանված կարգը հնարևավորություն և տալիս ի հա-  
շվի աշխատանքի բարձրացրած արտադրականության  
վոչ թե միայն պահպանել աշխատավարձի նախկին  
մակերեսը, այլ և տալ նրան անդրագույն աճեցումն:

16-րդ հոդվածի «Ա» կետով առանձնապես կարե-  
վոր նոմենտ և հանգիստանում այն բանվորների քա-  
ղակերումը, վորոնք աշխատանքի մեջ մտցնում են այս  
կամ այն բարելավումները և սժանդակում են աշխա-  
տագործման նորմերի զգալի բարձրացմանը: Այդպիսի  
գեղարվում անկախ վարձանակից, վորպիսին կարող  
են ստանալ աշխատավորները կատարելագործումների

համար, նրանց վճարվում և տարբերությունը հին և  
նոր գնահատումների միջև այն կերպածքների հա-  
մար, վորոնք պատրաստված են նրանց ձեռքով յերեք  
ամսվա ժամանակամիջոցում՝ կատարելագործումը մաց-  
նելու որից:

Այդ իսկ հոդվածը պարտավորեցնում և բոլոր  
տնտեսական և միության կազմակերպություններին  
առավել չափով աջակցել այն սախածեռնությանը, վոր  
հայտնաբերվում և սոցիալիստական մրցակցության  
ընթացքում բանվորների կողմից աշխատագործման  
ավելի կանոնավոր և բարձրացրած նորմեր սահմանե-  
լու գործում, նաև անցուրդի նորմեր սահմանելիս շո-  
ղկշարժային և գնացքային բրիգադների համար: Բնդ  
սմին պետք և սպահովվեն բոլոր անհրաժեշտ արտա-  
դրական պայմանները—ծրագրի կայունությունը, աշ-  
խատանքի լիաբեռնումն, նյութեղենի, գործիքների նը-  
պարակումն, պաշտամ ազմինիստրատիվ տեխնիկական  
դեկալարությունն են:

Հավաքայմանազրի 16-րդ հոդվածը պահանջում  
և բոլոր տնտեսական և միության կազմակերպու-  
թյուններից, ներգրավելով բանվորական մասսաները  
այդ հարցերի մանրամասն քննության և մշակման  
գործի մեջ վերացնել բոլոր այն արգելքները, վորոնք  
խանգարում են տեխնիկական նորմայացման հիման  
վրա սահմանված աշխատագործման առավել տեխնի-  
կական հնարևավորության նորմերի իրականացմանը:  
Հարկավոր և ներգրավել Տարիք-նորմայացման բյու-  
րոյի մարմինների մեջ ավելի աշխատավորներ, վո-  
րոնք անմիջապես կապված են արտադրության հետ  
և ծանոթ են նրա բոլոր պրոցեսներին, անցկացնել

Նրանց կուրսերի միջով։ Դա կոժանդակե պատվիրած չափանիների իրագործմանը, աշխատանքի արտադրականության աճեցմանը և դրա հիման վրա—աշխատավարձի անդրագույն մեծացմանը։

### Աշխատավարձի տացքի կարգը

Հափաքպայմանագրի 17-րդ հոդվածը թողնված է նախկին խմբագրությամբ։ Փոփոխել նրան անհրաժեշտ չե։ Դա արդեն մի շարք տարիներում անց է կացրած։ 17-րդ հոդվածը պատասխանում և արտադրության բոլոր պայմաններին և հենց աշխատավորների շահերին։

Աշխատավարձի տացքի կարգն ավելի ևս ապակենորոնացրած է։ Տնտեսական և միության մարմիններին տեղերում լիակատար իրավունք և վերապահած սահմանել աշխատավարձի տացքի ամսաթիվը, համակերպելով տեղական պայմաններին։ Բայց ընդսմին պետք է հաշվի առնվի Աշխատավորականի վորոշումըն այն մասին, վոր աշխատավարձը վճարվի այն թվերին, վորոնք հնարավորություն կտան ավելի կանոնավոր կերպով իրացնել աշխատավարձը, չստեղծելով հերթեր կոռուպտատիվային և պետական տունական կազմակերպություններում։

Պործուղարկներ, տեղաշարժներ, առակուրդներ

Պործուղարկների և նրանց վճարման տրոնի մեջ արժատական փոփոխումներ չեն մտցրած։ Միմիայն ճշշգրտված են առանձին մոմենտները յերթեկների

պաշտոնների հարցի վերաբերյալ և բարեփոխիվ ված և ծանոթությունը գործուղարկների մասին յեղած առդիրի յերկորդ պարագագին կից։ Առաջ այդ գաղափանությունն առաջ եր բերում հաճախակի կոնֆլիկտներ և այդ առթիվ ստացվել են տեղերից շատ առջարկներ ծանոթությունը ճշգրտելու անհրաժեշտության մասին։ Այժմ այդ ծանոթությունն արտահայտված է հետեւյալ խմբագրությամբ։ «Շոգեշարժային և դնացքային բրիգադների չնախատեսնված հապաղումներն աշխատանքի ժամանակ ձանապարհին, վորոնք առաջացել են հուսիններից, ջրատարումներից, հրդեհներից, խորակումներից, շոգեշարժների և շարժական կազմի փչացումից, նաև հապաղումներից աշխատանքային և տնտեսական գնացքներում և քարահանքերում, թեկուզ և յուր ուղեմասի և բաժանմունքի սահմաններում,— վճարվում են որապահիկ դրամով սկսած առաջին որից, յերբ խզումն աշխատավորի բնակության վայրից 56 ժամից ավելի յե գնացքի հետ ուղարկվելու մոմենտից մինչև վերադարձի մոմենտը։ Իսկ յեթե խզումը բնակության վայրից շարունակվում եր 56 ժամից պակաս, ապա որապահիկ դրամը վճարվում ե միայն յերեք որվա համար»։

Այդպիսի խմբագրությունը վերացնում է ամեն տեսակի մեկնարանությունները և մտցնում է վորոշ կարդ և պարզություն շոգեշարժային և գնացքային բրիգադներին գործուղարկի դրամը հաշվելիս։

Տեղաշարժների և նրանց վճարման մասին առդիրը հիմնականում թողնված և գործող խմբագրությամբ։ Նա համապատասխանում է որենսդրության

ըլ կազմելու և կնսարուին ժամանակին ներկայաց-  
նելու մեջ:

### Վարկերը բանութիւնի համար ընդլայնված են

Հավաքպայմանագրի նախագծի մշակման ժամա-  
նակ յերկաթուղային տրանսպորտի աշխատավորնե-  
րից ստացվել են չափազանց շատ առաջարկներ բան-  
շորի գոյություն ունեցող նորմերի փոփոխման և ընդ-  
լայնման մասին: Այդ առաջարկների թվում շատ կա-  
յին ուշագրության արժանի և նախատակահարմար  
առաջարկներ: Բայց և կային այնպիսի առաջարկներ,  
վորոնք չեյին բղիում արտադրության պայմաններից,  
այլ ուղղակի կար ցանկություն ստանալ բանշոր: Ուս-  
տի, հաշվի առնելով արանսպորտի ֆինանսական դը-  
րությունը և անհրաժեշտությունը՝ կյանքի մեջ անց-  
կացնել տեղերից ստացած միանգամայն նպատակա-  
հարմար առաջարկները, յերկաթուղ կենտկոմը և ՀՃՇԿ  
վերանայեցին բանշորի գոյություն ունեցող նորմերը:  
Ցուցակի մեջ լրացուցիչ մտցրած են 11 նոր արհեստ-  
ներ—պեղման վարպետ (բյորոյ մաստեր), բուկս յե-  
փող, մեքենավար-ընդունիչ, մեքենավար-սպնական, ու-  
ժային հաստիվածքների յուղիչ, նավթամուղի մեքենա-  
վար, յելեմտապան, շոգեշարժների և վագոնների լը-  
վացման բանվորներ, կրեողոտով տոգորված կոճեր  
բեռնող բանվորներ, ունդող գերծող (ֆրեզերօնիկ):  
Լծասարք պատրաստող (шօրնիկ):

Այդ արհեստներն ընդգրկում են մինչև 8,000  
մարդ: Ծնդլայնված են բանշորի նորմերը 20 արհեստ-  
ների համար—կալանդագործներ, սառը պահեստների

կշռորդներ, ծակփորիչներ, առաջքակալ թափողներ  
(заливальщики подшипников), միիչներ (калильщики),  
կաթսայագործներ լնթացիկ նորոգման մեջ դեպոյի  
հնոցպահներ, նավթաշինային լուսավորության լամպ  
վառողներ, կշռային վարպետներ, մեքենավար-դեկա-  
վարներ (машинисты-наставники), մեքենավարներ-լը-  
վացողներ, պղնձագործներ, շոգեշարժների լնթացիկ  
նորոգման վառարանագործներ, մամիխներ (прессов-  
щаки), շոգեշարժներին վառելիք նպարակող բանվոր-  
ներ, ջրտուքի նորոգման վականագործներ, հնոցի  
փոսեր մաքրողներ, արտաքին ցանցի ելեքտրոմոն-  
տյուրներ և ելեքտրականություն անցկացողներ: Այդ  
արհեստներն ընդգրկում են մինչև 47 հազար մարդ:

Բանշորի գոյություն ունեցող նորմերի վերանա-  
յումը և մեծացումն առաջ ե բերում լրացուցիչ ծախս  
տարեկան մինչև 500 հազար բուրլի: Բանշորի տացքի  
կանոնների մեջ մտցրած ե վորոշ կարգ: Վորպեսզի  
բանշորն իսկապես ոգտագործվի աշխատանքի ժամա-  
նակ, ձեռնարկներում պետք ե ինչ ել վոր լինի կա-  
ռուցիլեն բանշոր պահելու տեղեր: Այդ պահուստատե-  
ղերը թույլ կտան ավելի ուացիոնալ կերպով ոգտա-  
գործել բանշորը, իսկ բանվորը հնարավորություն կու-  
նենա աշխատանքներն ավարտելուց հետո տուն գնալ  
վոչ բանշորի մեջ, վորպիսի հանգամանքն անշուշտ  
աղդում և աշխատավորի առողջության վրա:

Մնացածում՝ աշխատանքի պաշտպանության  
արոնը մնացել ե առանց զգալի փոփոխությունից:

## Ա Յ Ա Կ Ե Ր Տ Ծ Ո Ւ Բ Յ Ո Ւ Յ

Աշակերտության մասին յեղած տրոհի մեջ 33-րդ  
հոդվածով մտցրած էն փոփոխություններ յերկաթուղային  
տրանսպորտում աշակերտաների քանակի մասին։ Նախ-  
կին կարգի փոխարեն սահմանված է աշակերտաների  
քանակը տվյալ տնտեսական տարվա համար։ Ներկա-  
յումս այդ քանակը վորոշվում է աշակերտաների զրահի  
(брոն) հայտնի տակոսով, համաձայն Աշխժողկոմատի-  
վորոշման, այսինքն մտցրած է նույնապիսի կարգ, ինչ-  
պես և արդյունաբերության բոլոր այլ ճյուղերում։

35-րդ հոդվածի մեջ մտցրած է չափազանց կա-  
րեր լրացումն ֆարզործուսի դպրոցներն ավարտած  
աշխատավորների բաշխման կարգի մասին։ Միության  
կաղմակերպությունները պետք է աշխատեն ինչ ել  
կոր լինի կանոնավոր կագմել նրանց տեղավորելու  
պլանը մինչև ֆարզործուսի դպրոցներն ավարտելու  
մոմենտը։

Անհրաժեշտ է ընդգծել այդ հոդվածում նաև տե-  
ղավորման կարգը։ Յեթե անհնար է յերկաթուղային  
տրանսպորտում տեղավորել ֆարզործուսի դպրոցներն  
ավարտած բոլոր անձերին, ապա անհրաժեշտ է հանձ-  
նել նրանց արդյունաբերության տնօրինությանը  
Աշխժողկոմատի համապատասխան մարմինների մի-  
ջոցով։

Բանշորի տացքի կանոնադրության մեջ մտցրած  
է պարզություն, այն է՝ ուսումնական արհեստանոց-  
ներում աշխատող բոլոր աշակերտաներին տրվում է աշ-  
խատանքի տեսակի համեմատ բանշոր արտադրության  
մեջ աշխատող բանշորների հետ համահավասար։ Բայց

փորովհետև աշակերտաների աշխատանքի ժամանակը  
կրծատված է, ուստի և նրանց համար բանշոր հագնե-  
լու ժամանակամիջոցը կրկնապատկվում է համեմա-  
տարար այն ժամանակամիջոցի, վոր սահմանված է  
արտադրության մեջ աշխատող բանշորների համար։

## ԿՈՎԱՆԻԵՆԳԱՊԱՅԻՆ ԿԱՐԻՔՆԵՐ

Այդ տրոհի համեմատած անցած պայմանագրի  
հետ հիմնականում թողնված է նախկին խմբագրու-  
թյամբ և լրացրած է նրանով վոր բանվորների և  
ծառայողների համար, վորոնք սովորում են ինդուս-  
տրիալ տեխնիկումներում, բանֆակներում, բարձրա-  
գույն դպրոցներում և կվալիֆիկացիայի բարձրացման  
դասընթացներում, սահմանված է կրծատված 6 ժա-  
մայական աշխատանքի որև նման կրծատված աշխատանքի  
որը տարածվում է նաև այն բանվորների վրա, վո-  
րոնք սովորում են յերեկոյան պրոֆտեխնիկական  
դպրոցներում, վորալիսին նախատեսնված չե գործող  
որենսդրությամբ։

Տրոհը ինժեներ-տեխնիկական աշխատավորների  
աշխատանքի պայմանների մասին չեր պահանջում  
արմատական փոփոխություններ և թողնված է, մոտավո-  
րակեա, նույն ձևով, ինչպես և հին պայմանագրում,  
ծշբանկով մի շարք կետեր սխալաբության հիման  
վրա։

Անվճար յերթեկեկի արտօնությունները զգալի  
կերպով ձևափոխված են համեմատած այն արտօնու-  
թյունների հետ, վորոնք գործում ենին անցյալ պայ-  
մանագրով։ Այդ փոփոխման անհրաժեշտությունը բա-

վականին մանրամասն և լայն կերպով մշակվել երանվոր ծառայողների բոլոր ժողովներում, իսկ այդ միջոցառման նպատականարմարությունը ճանաչել են բոլոր յերկաթուղականները: Ուստի նոր կանոնադրությունն անվճար յերթեկի մասին յերկաթուղային տրանսպորտի վրա նոր չե միության անդամների համար: Ընդհակառակը, նա արձանագրել ե այն պայմանները, վորոնցով սահմանված են անվճար յերթեկի տոմսեր տալու նոր նորմերը, վորոնց մասին յուր ժամանակ բավականին մանրամասն խոսվել և լայն բանվորական ժողովներում:

Հստ հին պայմանագրի միայնակը տարեկան ստանում եր 2 տոմս և ընտանիքավորը—4, այժմ միայնակը կստանա 1 տոմս և ընտանիքավորը—2 տոմս տարեկան: Մթերատոմսերը կտրվեն միմայն մինչև մերձակա առևտրական կետը, վորտեղ կա կոռպերատիվային առևտրական կազմակերպության խանութ—ընտանիքավորներին 12 յերթեկի համար, միայնակներին 6 յերթեկի համար տարեկան: Բացի գրանից, կտրվեն քարտիկ-տոմսեր  $85^{\circ}/_0$  զեղջով 12 յերթեկի համար մի անձին 100 քլմ. տարածության վրա: Ցերթե աշխատավորն ունի ուղեգիր հանգստի տուն կամ կուրորտ գնալու ապահովամարկղից, ապա նրան տըրգում ե անվճար տոմս: Իսկ հանգստի տուն և սանսառիում սեփական հաշվով գնալու ժամանակ տրվում է յերթեկի համար զեղջ  $50^{\circ}/_0$ -ով: Նման զեղջ ե արգում աշակերտաների համար եքսկուլսիաներ գնալիս են: Պահպանված են տոմսեր, վորոնք տրվում են աշխատավորին վարչության մասնակիցների միջև այլ արտոնություններ:

Համեմատելով անվճար յերթեկի արտօնությունները, նախատեսնվուծ հին և նոր պայմանագրերով, հարկավոր ե նշել հետեւյալը—առաջ ընտանիքավոր բանվորներն ստանում ելին 20 հիմնական յերթեկի տոմս (միանվագ, մթերատոմս, արձակման ժամանակ են), միայնակները 10 տոմս: Նոր պայմանագրով ընտանիքավորը կստանա 18 տոմս, միայնակը—9, բայց մթերատոմսեր կստանան միայն այն յերկաթուղականները, վորոնք ապրում են այնպիսի կայարաններում, վորտեղ չկա առևտրական կետ: Ընդ սմին զգալի կերպով ընդլայնած են իրավունքները, վորոնք ունեն մեծ նշանակություն իրենց սոցիալական բովանդակությամբ: յերթեկի զեղջի ուսումնավայրը, հանգստատի տները են: Ուստի այն վորոշումները, վոր մասնաներն ընդունել են նոր հավաքպայմանագիրը քըննելիս, ունեցել են ուղիղ գասակարգային մոտեցում ավյալ հարցին:

Վճռականապես վերակառուցել վիության աշխատանքը

Հնթացիկ տարում հավաքպայմանագիրը վերակընքվեց ավելի կարճ ժամանակամիջոցում, քան այդ տուաջ եր լինում: Հիմնական ընդհանրական պայմանագիրն արդեն հրապարակված ե «Գուլգոլ»-ում 1929 թ. դեկտեմբերի 21-ին և ույժի մեջ ե մտել 1930 թ. հունվարի 1-ից: Հավաքպայմանագիրը բոլոր առդիրներով լույս կտեսնի մոտ ժամանակում և կուղարկի բոլոր միության և տնտեսական կազմակերպություններին ի:

## ՀԱՎԱՔՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄՃԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՐՏԱԴԻՐ ՆՅՈՒԹԵՐ

- 1) Հավաքպայմանագիր, հրապարակված  
«Գուղով»-ում . . . . . 21/XII—29 թ.
  - 2) Աշխատավարձ, հրապարակված «Գուղ-  
ով»-ում . . . . . 17/XII—29 թ.
  - 3) Նույնը . . . . . 24/XII—29 թ.
  - 4) Հավաքպայմանագրի բրոցյուր առդիր-  
ներով . . . . .
  - 5) ԱՄՀԿԽ և յերկաթուղ, Կենտկոմի դի-  
րեկտիվ հավաքպայմանագրի  
կամպանիայի մասին և ՀԿԿ  
(թ) Կենտկոմի դիրեկտիվ միա-  
վարության մասին, „Բյոլ. ՇԿ  
Հ.-Դ.“ № 5 և „Բյոլ. ՇԿ  
Հ.-Դ.“ № 130—142.
-

ՀՀ Ազգային գրադարան



NL0200165

